

ժախքովը կ'ուսանէին ինն 12 աշակերտ՝ վարժապետութեամբ պոլսեցի Սերոբէ Պատկանեանի: Հոշակուած է նաև Ղուղայիցի աղայ Յօնանջան մըն ալ:

Գրբիզոր Խալֆայի ժամանակակից հոռովեական հայերուն մեծատուններէն հինգ վեց ընտանիք ալ կանուանին մերթ ամիրայ և ընդհանրապէս շէլէպի կամ հօճա, որոնք հետզհետէ, մանաւանդ Ազրիանուպոլսեցի Պօղոս պատրիարքի օրերը, Լուսաւորչականներու մերձիկ դործակցութեան մը միտումները կիրականացունեն:

Օրինակի համար Գրբիզոր Չէլէպի Տիւղեան 1, Կալնեցի Մատթէոս Չէլէպի մահտեսի Աստուածատուրեան, Թընկըր զատէ Յակոբ, Տիւղ-Յակոբ Չէլէպի՝ որսուէր ու հանճարեղ աշուտական մը, Վենետիկի Միթիթարեանց մարզը՝ որ տպել տուած է Հ. Աստէն Բազրատունիի քանի մը երկերը, Մկրտիչ Չէլէպի, Գըլըր զատէ Անտոն և Զէմպէրէկէի օղլու: Ասոնք են որ վերոյիշեալ Պօղոս պատրիարքի դումարած աստուածաբանական ժողովին ներկայ դանուած են, իրենց քանի մը վարդապետներուն հետ, հոռովեական հայերուն կողմէն առ հասարակ խոյ լուսաւորչականներու կողմէն՝ իբրեւ պատուիրակ ներկայ եղած են զլուսաւորապէս Ազնաւորեան կարապետ ամիրայ, Յովհաննէս ամիրայ Արիստակէսեան, Մահտեսի Յովհաննէս Չէլէպի, Մահտեսի Յակոբ ամիրայ Լաթիֆեան, Գրբիզոր ամիրայ Սալայեան, Մկրտիչ Ամիրայ Արփիարեան, աղայ Պօղոս Մարգարեան, Ճանիկ ամիրայ, Մահտեսի Պօղոս Կէլիէիեան, Յակոբ Մանանեան, Մահտեսի Աստուածատուր Ղօնէկիւիւեան, Յարութիւն աղայ Նորատունկեան, Մկրտիչ Աշնան, Մահտեսի Յարութիւն Բինկեանցի, Մարտիրոս Սալայեան, Բարունակ ամիրայ, Շնորհքեան Մանուէլ, Մանուէլ աղայ քէրէտտէճի (հայրն Յակոբիկ աղայ Մանուէլեանի, որ տնօրէնն էր Ճեմարանի և զբաղէս ու Տէրոյեցի խումբին ալ Թիկնակիցն էր)

1. Տիւղեանմներ՝ իբրեւ ճիմ ոսկերչապետներ ու վաղեմի վարիչներ փողերամոցիմ՝ եղած են մախ Ղազէզ Արթիմի պաշտպամ վարպետները: